



Մայիսի 25-ին Բյուրեղավանի հիմնական և ավագ դպրոցներում տեղի ունեցավ շրջանավարտների ավանդական «Վերջին զանգ» միջոցառումը: Միջոցառումներին ներկա էր Բյուրեղավանի քաղաքապետ Հակոբ Բալասյանը: Ներկայացնում ենք քաղաքապետի ուղերձը շրջանավարտներին.

*Սիրելի շրջանավարտներ*

*Շնորհավորում եմ բոլորիդ այս գեղեցիկ ավանդույթի՝ «Վերջին զանգի» հիշարժան օրվա կապակցությամբ: Հասկանալի ու բնական է այն հուզմունքը, որ ապրում եք դուք՝ հրաժեշտ տալով ջերմ ու հարազատ դարձած կրթօջախներին, սիրելի ուսուցիչներին: Սակայն դպրոցական ուսուննառության ավարտը խորհրդանշող վերջին զանգն ունի մեկ այլ հրաշալի խորհուրդ ևս՝ այն ձեզ առաջնորդում է դեպի ինքնադրսևորման և ինքնահաստատման ավելի լայն ասպարեզներ: Համոզված եմ, որ դպրոցական տարիներին ձեռք բերած ձեր հարուստ գիտելիքները, հայեցի կրթությունն ու ազգային արժեքների ոգով դաստիարակությունը կօգնեն ձեզ սեփական ունակություններն ու ծիրքերը ներդնելու մեր ժողովրդի բարօրությանն ու երկրի հզորացմանը՝ իբրև մեր պետության արժանավոր քաղաքացիներ: Կանաչ ճանապարհ եմ մտախոհում ձեզ: Եվ թող իրականություն դառնան ձեր բոլոր ձգտումներն ու երազանքները:*

Հարգանքով՝

Հ. Բալասյան

29.05.12